

5. Sixth Sunday after Pentecost (Eve of the Fast of Transfiguration)

Isaiah 3:1-11; Romans 11:13-24; Matthew 14:13-21

5. Զ. ԿԻՐԱԿԻ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԷՆ ԵՏՔ

Եսայի 3:1-11; Հռոմայեցիներուն 11:13-24; Մատթեոսի 14:13-21

Եսայի 3:1-11

Ահաւասիկ, Երկնաւոր Զօրքերու Տէրը Հրէաստանն ու Երուսաղէմը պիտի զրկէ իրենց զօրութիւնը եղող նեցուկներէն, հացի եւ ջուրի ամբողջ պաշարէն:

Ալ պիտի չունենան ո՛չ յաղթ կտրիճ ու պատերազմիկ, ո՛չ դատաւոր ու մարգարէ, ո՛չ գուշակ եւ երէց, ո՛չ յիսնապետ ու հիանալի խորհրդատու, ո՛չ իմաստուն ճարտարապետ եւ ո՛չ ալ ճարպիկ կախարդ:

Դեռահաս պատանիներ իշխան պիտի կարգեմ անոնց վրայ եւ քմահաճոյքը պիտի ըլլայ անոնց իշխողը:

Մարդիկ իրարու պիտի իյնան, ընկերն իր ընկերը պիտի կեղեքէ. երիտասարդը արհամարհանքով պիտի ընդդիմախօսէ ծերին եւ գռեհիկը՝ ազնուականին:

Այն ատեն ամէն մէկը իր եղբայրը կամ հօրը ընտանիքին մէկ անդամը պիտի բռնէ եւ ըսէ. «Դուն պատմուճան ունիս, եկուր մեր իշխանը եղիր եւ մեր ուտելիքը դուն հայթայթէ»:

Իսկ անիկա պիտի պատասխանէ. «Ես ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ ուտելիք ունիմ տունս, ո՛չ հագնելիք. այս ժողովուրդին իշխան չեմ ըլլար»:

Երուսաղէմը լքուեցաւ եւ Հրէաստանը կործանեցաւ, որովհետեւ իրենց բնակիչները անօրէնութիւն խօսեցան եւ Տիրոջ հակառակ գործեցին:

Ուստի իրենց փառքը նսեմացաւ, իրենց երեսէն ամօթը վերցուեցաւ. Սողոմացիներուն պէս իրենց մեղքերով պարծեցան, առանց ծածկելու: Վա՛յ իրենց. իրենք իրենց գլխուն չարիք բերին:

Արդարին ըսէք՝ թէ բարի է իր վերջը, որովհետեւ իր գործերուն պտուղը պիտի վայելէ:

Բայց վա՛յ անօրէնին. չար պիտի ըլլայ անոր վերջը, որովհետեւ իր գործած չարիքները իրեն պիտի դառնան:

Հռոմայեցիներուն 11:13-24

Բայց ձեզի՝ հեթանոսներուդ կ'ըսեմ.՝ Հեթանոսներուն առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծենամ, մտածելով որ թերեւս այս ձեռով ազգակիցներուս նախանձը գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ոմանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած զանոնք մերժեց, որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ, կը նշանակէ թէ երբ վերստին ընդունի զանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:

Թե Աստուած վերստին պիտի ընդունի զանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է, կը նշանակէ թէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է. նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ նուիրուած են, կը նշանակէ թէ ճիւղերն ալ Աստուծոյ նուիրուած են: Ճիշդ է որ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, եւ դուն՝ որ վայրի ձիթենի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ձիթենիին արմատներէն եկող հարուստ աւիշը ըմպեցիր: Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեր կոտրած ճիւղերը. մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրայ: Հիմա պիտի ըսես՝ «Աստուած այդ ճիւղերը կտրեց՝ զիս պատուաստելու համար»: Իրաւ է, անոնք՝ Հրեաները կտրուեցան, որովհետեւ չհաւատացին, եւ դուն՝ հեթանոսդ, հաւատալով համար արմատին վրայ հաստատուեցար. բայց մի՛ հպարտանար, այլ՝ վախցիր: Որովհետեւ եթէ Աստուած բուն ճիւղերուն չխնայեց, թերեւս քեզի երբեք չխնայէ: Տե՛ս թէ ո՛րքան բարի է Աստուած եւ խիստ՝ միաժամանակ: Խիստ է հաւատքի մէջ կործանածներուն հանդէպ եւ բարի՝ քեզի հանդէպ, պայմանաւ որ շարունակես անոր բարութեան արժանի մնալ. այլապէս դուն ալ պիտի կտրուիս: Նոյնպէս ալ, եթէ Հրեաները թողուն իրենց անհաւատութիւնը, կրկին պիտի պատուաստուին արմատին վրայ, որովհետեւ Աստուած կրնայ զանոնք վերստին պատուաստել: Եթէ դուն, որ իսկականին մէջ վայրի ձիթենի մըն էիր, կտրուեցար եւ պատուաստուեցար ընտանի ձիթենիին վրայ, որ քու բունդ չէր, որքա՞ն աւելի դիւրութեամբ պիտի պատուաստուին նոյն այդ ձիթենիին բնական ճիւղերը:

Մատթէոսի 14:13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, առանձինը նաւակ մտնելով՝ այդտեղէն գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, զորաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին.

– Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու:

Յիսուս ըսաւ.

– Իրենք պէտք չունին երթալու: Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը:

Անոնք ըսին Յիսուսի.

– Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ:

Յիսուս ըսաւ.

– Հո՛ւք բերէք ատոնք:

Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, աչքերը երկինք բարձրացուց, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաժնեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողները շուրջ հինգ հազար հոգի էին, կիներն ու մանուկները չհաշուած: